ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆԱՇԽԱՏԱՆՔ

Երաժշտություն

(առարկա)

Թեմա՝ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԻԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կազմեց՝ԱնահիտՀարությունյանՄարտունի

Կապանիթիվ 6 հիմն.դպրոց

Ղեկավար՝ՄիլենաՄինասյան

<<Կապանիթիվ 2 ավագդպրոց>>ՊՈԱԿ

(Վերապատրաստողկազմակերպությանանվանումը)

Կապան 2022թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն……..…...2
2.Հայ ժողովրդական երգի առանձնահատկությունները…….....3
3.Աշխատանքային երգեր…….....4
4.Կանանց աշխատանքային երգեր……..….4
5.Ծիսական երգեր…….....4
6.Հարսանեկան երգեր…….....5
7.Ողբեր կամ մահերգեր…….....6
8.Տարբեր ծեսերի ու տոնակատարութունների երգեր...……....7
9.Կատարգերգեր և երգիծական երգեր……...7
10. Կատարգերգեր և երգիծական երգերի երաժշտական լեզուն….8
11.Օրորներ……....8
12.Օրորների երաժշտական լեզուն……....9
13.Քնարական երգեր……..….9
14.Սիրո քնարական երգեր..…… …….9
15.Վիպերգեր……..….10
16.Էպիկական երգեր……10
17.Դյուցազներգեր……..…11
18. Պտղաբերություն ակնկալող ծիսակարգ ……...12
19.Եզրակացություն……..14
20. Գրականության ցանկ……..……..15
21.Օրվա դասի պլան…….....16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժողովրդական ստեղծագործությունը ազգային մշակույթի ինքնատիպ և գեղարվեստական բարձր արժեք ներկայացնող բնագավառներից է: Մարդկային ստեղծագործությունը 2 կարևոր շրջանի է բաժանված՝ բանավոր և գրավոր: Ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր ստեղծագությանը գեղարվեստական վառ կերպարներով, բացահայտված են ժամանակակից մարդու խոհերը, ձգտումները և հույզերը: Ժողովրդական ստեղծագործությունը այն հանրագիտարանն է, որտեղ արտացոլված են ժողովրդի խոհերն ու զգացմունքները և ունի գիտական ճանաչողական նշանակություն:

Օրինակ՝ Հայկի և Բելի, Արա Գեղեցիկի, Սասնա ծռեր լեգենդը բացահայտում են հայ ժողովրդի ազատատենչ ոգին: Դարեր շարունակ ժողովուրդն իր ստեղծագործական պրակտիկայում մշակել և հղկել է ինչպես իր խոսակցական, այնպես էլ իր երաժշտական լեզուն, մտածելակերպը, ռիթմիկ և ինտոնացիոն ձևը: Այս է ազգային պրոֆեսիոնալ դպրոցի ստեղծման հիմքը:

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեր թվարկությունից առաջ 2-րդ դարում ձևավորվել է հայ պետականությունը իր սոցիալական և դասակարգային հատուկ շերտավորումների ազնվականական դասակարգի բարձր հոգևոր դասավորությամբ, որոնց մեջ չէին գտնվում ռազմիկները, մշակները, ստրուկները: Հենց այդ շրջանում ձևավորվում, ձևակերպում են հայ ժողովրդական արվեստի հիմնական ժանրերն ու ձևերը: Կենսական գործունեության տարբեր դրսևորումներում՝ աշխատելիս, օրոր ասելիս և այլն, մարդիկ երգել են, և երգը կազմել է տվյալ գործունեության անբաժանելի ուղեկիցը: Բացի այդ, արձագանքվել են շրջապատող իրականության ամեն մի երևույթին՝ բնությանը, իրերին և այլն, և դրանց երգ են նվիրել: Երգի միջոցով արտահայտել են տարբեր զգացմունքները՝ կարոտը, սերը, ուրախությունն ու տխրությունը: Այլ կերպ ասած՝ ցանկացած կենսաձև և զգացմունք արտահայտվել է երգի միջոցով: Ժողովրդական ստեղծագործության մեջ մեծ տեղ է գրավում դիցաբանությունը կամ վիպագրությունը: Սա երաժշտական մի հասկացություն է, որը նշանակում է երգելով խոսել:

1. *Վիպական էպիկական ժանրում* ստեղծագործություններ պատմելիս են եղել երգելով: Ուրեմն այդ երաժշտական ժանրի առանձնահատուկ գիծը արտասանական թվերգային ոճն է:
2. *Բնական-լիրիկական ժանրում* բացահայտված են մարդկային հոգու զգացմունքների ամենաբազմազան էլեմենտները: Այդ ժանրը ստեղծագործող գուսաններն են կամ գրող ստեղծագործողները: Հայկական ժողովրդական ստեղծագործական ժանրերից են նաև աշխատանքային, ռազմի, որսորդական ծիսական, կենցաղային, հմայքի երգերը:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԵՐԳԵՐ

Աշխատանքային երգերը լինում են երկսեռ՝ տղամարդկանց և կանանց:

ա) երկրագործական աշխատանքային երգեր կամ հորովելներ:

բ) կանանց աշխատանքային երգեր: Աշխատանքային են կոչվում այն երգերը, որոնք պատկերում են նյութական բարիքներ ստեղծող զանազան պրոցեսները: Աշխատանքային երգի տարատեսակները հետևանք են աշխատանքի բնույթի:

Երկրագործական աշխատանքի երգեր կամ հորովել: Հորովելն արտացոլում է գեղջուկի երկրագործական աշխատանքները կալ, ցանք, վար, հունձ, գութաններ, կալի երգ, խուրձ կրելու հորովելներ: Աշխատանքի ազատ բնույթը պայմանավորվել է հորովելների ստեղծագործման իմպրովիզացիոն բնույթը, իսկ վերջինս էլ նրանց ազատ կառուցվածքը, հորովելների բանաստեղծական տեքստի ազատ կառուցվածքի հետ մեկտեղ որոշ տարրեր համարյա թե բոլոր հորովելներում պարտադիր ձևով առկա են: Դրանք են՝ բացականչությունները, հո-հոր-հորովել կամ խոսքեր ուղղված լծկանին «սիրուն», «ծիրան» և այլն:

«ծիգ տուր, քաշիր, այ եզո, հո, արա»:

ԿԱՆԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԵՐԳԵՐ

Կանանց աշխատանքային երգերը նկարագրում են գեղջկուհու բազմապիսի աշխատանքը, կով կթելը, խնուցի հարելը, բուրդ գզելը, թել մանելը, լվացք անելը, հաց թխելը: Հորինում են այս երգերը դարձյալ աշխատանքային պրոցեսում: Ի տարբերություն հորովելների՝ աշխատանքային երգերը հիմնականում զուրկ են իմպրովիզացիոն բնույթից, բացականչական նկարագրական տարրերից, ընդհակառակը՝ նրանցում զգացվում է ռիթմի ուժեղ շեշտվածություն, շարժման կանոնավորություն, որովհետև կանանց աշխատանքի հիմքում ընկած են ձեռքի կազմակերպված շարժումները.

Խանե, խանե, կրանե, խանե,

Շիո, շիո, խանե, խանե,

Սանդիկ, դյուզե, ծեծո բյուզե,

Խանե, խանե, խանե, խանե:

ԾԻՍԱԿԱՆ ԵՐԳԵՐ

ա) Հարսանեկան երգեր

բ) Ողբեր կամ մահերգեր

գ) տարբեր ծեսերի և տոնակատարությունների երգեր

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԵՐԳԵՐ

Հարսանեկան են կոչվում այն բոլոր երգեր, որոնք կապված են այդ հանդեսի հետ և կատարում են հարսանիքի ժամանակ: Հանդեսը հաճախ ներկայացրել է մի թատերականացված արարողություն, որտեղ տեղ են գրավել զանազան տիպի խաղեր, հեքիաթներ, կատակներ, երբեմն՝ մի ամբողջ սյուժետացված հեքիաթի-պատմություն, այլևայլ ծեսեր: Նահապետական ընտանիքի գոյության պայմաններում ամուսնությունը գյուղի հասարակական կյանքի ավելի քան կարևորագույն իրադարձություններից մեկն է: Հարսանիքը հնում տևել է մի քանի օր, ունեցել է իր կատարման կարգ ու կանոնը, դրանցից մի քանիսը մինչև օրս ուժի մեջ է: Օրինակ՝ նշան դնելը, եկեղեցի գնալը, օժիտ ուղարկելը, օժիտի ցուցադրումը, հարսին հագցնելը, երաժիշտներ հրավիրելը, աղջկա տանը հարսանիքը սկսել, ապա թափորով, երգ ու նվագով տղայի տուն հարսանիքի գնալը և այլն:

Հարուստ հարսանիքը ընդմիջումներով տևել է մոտ 40 օր, հանդեսին հրավիրված յուրաքանչյուր ոք ունեցել է իր դերը: Հարսի ու փեսայի ընկեր, ընկերուհիներ, քավոր և քավորկին, քահանա, հարսնաքույր և խաչեղբայր ու այլն: Նրանք բոլորն էլ իրենց պարտականությունները կատարելիս երգել են հարսանեկան այն երգերը, որոնք երգել են հարսի ընկերները պսակի նախորդ գիշերը մինչև լույս՝ կոչվել են «ծաղկոց»: Հարսի ու փեսայի, նրանց գեղեցկությունը, երիտասարդությունը և մյուս արժանիքները գովերգել են նաև հարսանյաց հանդեսի ժամանակ: Նրանց մեջ փեսային կոչել են «թագավոր», համեմատում են արևի հետ և նեկայացնում զուգված, զարդարված, երբեմն նույնիսկ թագավորին վայել հանդերձանքով: Հարսին համեմատում են լույսի հետ և ներկայացնում են նրան իբրև տնարար և շնորհալի, ժրաջան ու գործունյա տնտեսուհու:

Գովերգերը երգում են քառյակների ձևով, որոնց նվազագույն թիվը 3-4 է, իսկ առավելագույնը՝ 10-12: Հաճախ գովքերը հորինվում են հարց ու պատասխանի սկզբունքով: Հարսանեկան երգերից կատակները կամ, ինչպես Կոմիտասն է անվանում, «զվարճական» երգերը վերաբերում են հարսանքավորներին: Հարսանեկան երգերի թվին են պատկանում նաև հարսանեկան լացերը: Լալիս են հարսը, նրա մայրը, քույրը և կին ազգականները: Լացի պատճառները շատ են՝ ապագա հարսին նահապետական ընտանիքում սպասող տնային տնտեսուհու անհրապույր, ծանր կյանքը: Երգերի բնույթը չափավոր ու ծանրակշիռ են դարձնում նրանց բնորոշ խառն ու բարդ մետրերը (5/4, 11/4) և այդ մետրերի հիման վրա սահուն ընթացքով ծավալվող ռիթմական պատկերները: Հանդիսավորության, զսպվածության, վեհության են հարսանեկան ծիսային երգերի երաժշտական լեզվի ընդհանուրառանձնահատկությունները:

Պարերում ռիթմը, նրա զարգացման պարբերակությունը, ռիթմական պատկերի կրկնությունը, կառուցվածքների համաչափությունը, հայկական պարերին բնորոշ 6/8 չափը, հանդես են գալիս իբրև ձևակառուցման գործոններ:

ՈՂԲԵՐ ԿԱՄ ՄԱՀԵՐԳԵՐ

Ողբեր կամ մահերգեր ծիսական երգերի տարատեսակներն են: Ողբերը հորինվել են կոնկրետ դեպքի ազդեցության տակ և առավել ողբացող հարազատների ու ողբացող կանանց կողմից: Ողբացողները մեռնողի հարազատներն են՝ մայրը, կինը, քույրը, և մոտիկ ազգականները, որոնք ողբերը հորինել են տեղն ու տեղը՝ իբրև իրենց վշտի ու կարիքի արտահայտություն: Ողբասաց կանանց երգը հորինել են նախապես: Մեռելը սգալու համար նրանք հրավեր են ստացել ու վարձատրվել: Երբ մեռնողը դյուցազն էր, ժողովրդական հերոս կամ կյանքի օրինակելի ու ուսանելի (հորինած ողբի) ճանապարհ անցած մի մարդ, ապա ողբասացի հորինած երգի բովանդակությունն էլ ավելի հարուստ է եղել: Մինչև վերջին ժամանակներս էլ մեռելների վրա լալու համար ողբասացների հրավիրում էին: Ողբեր հաճախ անվանում են բայաթիներ՝ բեյթային (երկտող) կառուցվածք ունենալու համար: Ողբերը դեպքի ազդեցության տակ հորինվելու պատճառով չունեն կոնկրետ կառուցվածք և համարյա չեն էլ ենթարկվում որևէ կոմպոզիցիոն կառուցվածքի: Կառուցվածքային այդ ազատությունը բխում է ողբերին բնորոշ պատմողականությունից, նկարագրվում է դեպքը, եթե մահը կապված է որևէ պատահարի հետ, հիշատակվում է մեռնողի վերջին ցանկությունները, կյանքում ունեցած իղձերը, ժողովրդական արտահայտությամբ՝ մուրազները, գովերգում են նրա արժանիքները՝ գեղեցկությունը, շնորհալիությունը: Ողբացողը վշտից խելակորույս արտահայտում է երբեմն մեկը մյուսի հետ կապ չունեցող մտքեր, որոնք բորբոքվում են հատկապես ցավակցելու համարյա եկողների երևալով: Սովորաբար ողբացողն իր լացն «համեմում» է ափսոսանքներով, բնության տխուր տեսարանների պատկերներով վիշտ արտահայտող բացականչություններով (վայ, վայ, օյ, ամա՛ն և այլն): Ողբերը

իրենց բնույթով իմպրովիզացիոն-պատմողական են, ինքնամփոփ ու ինքնապարփակ:

Ողբերի երաժշտական լեզվի կառուցման ու զարգացման ազատ սկզբունքն է իմպրովիզացիան: Կառուցվածքների անհավասարության հետ մեկտեղ ողբերի կատարման ազատ եղանակը, ֆրազներն անավարտ թողնելով, դրանք երկարաշունչ հնչյուններով ավարտելը:

«Ողբ» (Կոմիտաս Ակնա երգեր)

Արփեն ջան» Ստ. Մելիքյան և Ս. Տեր – Ղևոնդյան – Շիրակի երգեր:

ՏԱՐԲԵՐ ԾԵՍԵՐԻ ՈՒ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԳԵՐ

Տարբեր ծեսերի ու տոնակատարությունների երգերը պատկանում են կենցաղի մեջ արմատավորված զանազան արարողություններ, սովորություններ, նկարագրում ամբողջ տոնակատարություններ և այլն: Տոնակատարություններից հատկապես ճոխ են եղել և բոլորին մեծ զվարճություն են պատճառել համբարձումն ու վարդավառը կամ ջրի ծառ ու ծաղկի պաշտամունքի տոնները: Համաբարձման տոնը թեպետև կատարվում է Քրիստոսի համբարձման օրը, բայց այն հեռու է կրոնական բովանդակությունից: Ըստ ժողովրդական հավատալիքների՝ համբարձման գիշերը իբրև թե բոլոր բույսերը իրար հետ զրուցում են, ջրերը որոպեապես կանգ են առնում, գերբնական զորություն ստանում: Եթե այդ ջրի մեջ որևէ առարկա գցես ու ցանկություն հայտնես, ոսկի կդառնա, բուժիչ հատկություն կունենա և այլն: Համբարձման նախորդ օրը աղջիկները դաշտերից ծաղիկներ են հավաքում և յոթ աղբյուրներից ջուր վերցնում, հավաքած ծաղիկներից կազմում են փնջեր որոնք կոչվում են համբարձման փնջեր, իսկ ջրով լիքը կճուճի մեջ լցնում են զանազան առարկաներ (մատանի, ուլունք, մատնոց և այլն)՝ վիճակահանելու համար: Համբարձման տոնին մասնակցում են միայն գյուղի հարսները և աղջիկները: Վարդավորի տոնը կապված է հատկապես ջրի պաշտամունքի հետ: Ձրի, ինչպես և ծաղկի պաշտամունքը սերտորեն առնչվում են պտղաբերության աստվածուհի Անահիտին նվիրած բազմաթիվ տոներից մեկը:

ԿԱՏԱԿԵՐԳԵՐ ԵՎ ԵՐԳԻԾԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Կատակն ու երգիծանքն արտահայտականության յուրօրինակ միջոցներ են, որոնց օգնությամբ ժողովուրդը երգերում արտացոլում է մարդկային այլևայլ հարաբերություններ, առաջադրում իր բարոյական չափանիշները: Երգիծական երգերի ու կատակերգերի բովանդակությունը կենցաղում տեղ գտած ամոթալի երևույթների, ինչպես և մարդկային բնավորության բացասական գծերի ծաղրն է՝ հարբեցողություն, ծուլություն, թափթփվածություն, մեծամտություն, շատախոսություն և այլն: Ծաղրելով բացասականը՝ ժողովուրդը հաճախ հակադրում է նրան դրականը: Հայհոյանքները, ազատ համեմատությունները երգիծական երգերի անհրաժեշտ բաղկացուցիչներն են և ստեղծում են նրանց բնորոշ կոլորիտը: Երգիծանքի ձև է «անուն դնելը»՝ մականունը. բացասական գիծը ներկայացնում է ընդհանրացված ու խտացված: Հայ գեղջուկ երգերում ծաղրն ու երգիծանքը ունեն արտահայտության մեղմ, զուսպ երանգ բարեսիրտ արտահայտություն: Դրանք թեպետև անցնում են կատակի սահմանները, բայց սոցիալական սրության չեն հասնում: Այնուհանդերձ

ժողովուրդը սուր ծաղրի առարկա դարձնում է այն վանականներին տերտերներին, որոնք քարոզել են «հանդերձյալ աշխարհի բարեպաշտության ու հնազանդության» գաղափարները, սերը համարել են մեղք և այլ:

ԿԱՏԱԿԵՐԳԵՐ ԵՎ ԵՐԳԻԾԱԿԱՆ ԵՐԳԵՐԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԼԵԶՈՒՆ

Կատակերգերն ու երգիծական երգերը երաժշտականի իմաստով համարյա նույն պարերգերն են, այսինքն՝ սրանց համար ևս բնորոշ են շարժման պարբերականությունը, փոքր ծավալը, կրկնությունը, հիմնականում հարվածների համաչափությունն ու ձևի քառակուսի կառուցվածքը, կատարման կենսուրախ բնույթը: Այստեղ մեծ է ռիթմի դերը, երբեմն ռիթմական տարբեր պատկերները խիստ հակադրվում են: Երգիծական երգերն ու կատակերգերը ուշագրավ են ոչ միայն իրենց դաստիարակության նշանակությամբ, այլև երաժշտական լեզվի հնարանքների օգտագործման բազմազանությամբ և հնարամտությամբ:

ՕՐՈՐՆԵՐ

Օրորների հիմնական թեմատիկան սերն է դեպի սիրասուն զավակը: Սիրող մայրը օրորներում գեղեցիկ համեմատություններ է անում, քնքուշ փաղաքշական արտահայտությունները՝

Ծառի տակը քուն դնեմ,

Ծառի վրա հով ընե

Ծառի ճղքեն ջան նանիկ:

Օրորների մեջ կան նաև այնպիսի երգեր, որոնց բովանդակությունը անմիջական կապ չունի երեխայի քնեցնելու հետ: Դրանց մեծ մասի թեմատիկան ձև է: Երեխային օրորելիս տնային բազմազան հոգսերից ազատ կինը ընկնում է հիշողությունների գիրկը և երգելով արտահայտում իրենց հուզող զգացմունքները, մյուս կողմից պարի միջոցով նա արտահայտում է իր կրած տանջանքները և տառապանքները կորցրած հարազատների համար: Չէ՞ որ օրորները մանկական երաժշտական առաջին տպավորություններն են: Այդ ամենով հանդերձ օրորների թեմատիկայի գերիշխողը երեխայի նկատմամբ տածած սիրո զգացմունքներ է արտահայտում:

ՕՐՈՐՆԵՐԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԼԵԶՈՒՆ

Օրորների երաժշտական լեզվի առանձնահատկությունների կոմպոզիցիոն հարստությամբ և երաժշտական բառապաշարի տեսակետից ժողովրդական ստեղծագործության բարդ ժանրերից են: Հատկապես նրանք հարուստ են իմպրովիզացիոն տարրերով: Օրորները լայնաշունչ են, մեծ ձայնածավալով, հնչյունաշարի մեծ հատվածներ ընդգրկող աստիճանական շարժումով, այս ամենն էլ հենց ստեղծում են մեղեդու լայն շունչ:

ՔՆԱՐԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Քնարական երգերը հայկական ժողովրդական երգաստեղծության ամենամեծ բաժինն են կազմում: Մեծ է նրանց թեմատիկ բազմազանությունը, լայն՝ ընդգրկված թեմաների շրջանակը: Գեղջկական երգարվեստի այս ժանրում խմբավորում են սիրո, սոցիալական անհավասարության, որբության, օտարության թեմաներով ստեղծված երգերը, ինչպես մարդկային հոգեկան խոր ապրումներ պատկերող այլ երգեր:

ՍԻՐՈ ՔՆԱՐԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Սիրո քնարական երգերը երանգների մեծ բազմազանությամբ արտացոլում են խոր զգացմունքներ, հոգեկան հուզումնալից ապրումներ: Պատանին կամ աղջիկը իր զգացմունքներն արտահայտելու համար միշտ ընտրում են արտահայտության զուսպ ձևեր՝ երբեմն օգտագործելով տարբեր համեմատություններ ու այլաբանություններ:

Բնության դերը սիրո երգերում նշանակալից է, չկա մի երգ, որտեղ նրա մասին այս կամ այն կերպ չհիշատակվի: Բնության երևույթների հետ համեմատությունները արվում են համապատասխանության և հակադրության սկզբունքով:

Սիրո երգերը իրենց զգացողական երանգով բաժանվում են 2 խմբի՝ 1-ինը հուսախաբ ու դժբախտ սիրո երգեր, 2-րդը՝ երջանիկ սիրո երգեր: Երջանիկ սիրո երգերի մեջ շատ է զգացվում սիրած աղջկա և նրա գեղեցկության գովքը: Հաճախ գովքերն

ունենում են հարց ու պատասխանի կառուցվածք, կամ կատարվում են իբրև երկխոսություն տղայի և աղջկա միջև:

Բազմազան են նաև դժբախտ սիրո մոտիվները: Այս թեմայով ստեղծված երգերը կարելի է խմբավորել այսպես՝

ա) անպատասխան սիրո երգեր

բ) ամուսնության հետ կապված նահապետական ընտանիքի դաժան բարքեր արտացոլող երգեր:

ՎԻՊԵՐԳԵՐ

ա) էպիկական երգեր

բ) դյուցազնական երգեր

գ) պատմական երգեր

ա) Վիպերգերին են պատկանում էպիկական երգերն ու դյուցազներգերը: Ժողովրդական երգային ստեղծագործության մեջ քիչ են պահպանվել:

«Իմացածներիս մատով էին ցույց տալիս» - Կոմտաս

Դրա գլխավոր պատճառը այդ երգերի կառուցվածքային բարդությունն է - արձակ շարադրություն երկար պատմություններն են: Լեզվական բարդության շնորհիվ դրանք մեծ մասամբ երգել են ժողովրդական երաժշտության պրոֆեսիոնալ կատարողները՝ գուսանները: Ուրեմն՝ վիպերգեր կատարել են թե գեղջուկները, թե առավելապես գուսանները: Անկախ դրանից՝ այդ ժանրի մեզ հասած նմուշները, թվում է, թե ունեն գեղջկական ծագում:

Վիպերգերից մեզ հասել է «Մոկաց Միրզան», «Սասունցի Դավիթը»:

Էպոսի երաժշտականացված դրվագները:

«Սասունցի Դավիթ» էպոսի ձայնագրված դրվագներ՝ էպիկական երգեր են, իսկ «Մոկաց Միրզան» - դյուցազներգերը:

ԷՊԻԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Էպիկական երգեր պատմերգություններ են, ժողովրդական-պատմական ավանդույթներ: Այսպես. «Սասունցի Դավիթը» էպոսում 8-10-րդ հայ ժողովրդի մղած պայքարը արաբական զավթիչների դեմ հայրենիի ազատության և անկախության համար, նրանց մղած պատերազմներն են ու հերոսականությունը: Էպոսում արտացոլված է նաև երկրի սոցիալական ներքին կյանքը՝ խորացող անհավասարության հետևանքը հանդիսացող ժողովրդական լայն խավերի նյութական ծանր վիճակն ու զրկանքները: Զորեղ ու հակադիր ուժերի, բարի ու չարի բախումը կազմում է էպոսի զարգացման հիմքը, ընդ որում՝ շատ ուժերը արտաքի թշնամիներն ու ներքին հարստահարիչներն են, իսկ բարին՝ հայ ժողովուրդը իր արդար ձգտումով ու երազանքներով, իր հոգևոր հարստությամբ: Էպոսում հայ

ժողովուրդը քաջ է, ուժեղ, խաղաղասեր: Այդ ժողովուրդը ուժեղ է աշխատասիրությամբ ու հայրենասիրությամբ, իր հավատարմությամբ ավանդականին (զորաբեր նվիրվածություն ծնողներին, երկրին ու հողին):

Էպոսում հերոսները առանձին-առանձին վերցրած ներկայացրել են հայ ժողովրդի բնավորության որևէ գիծ, իսկ բոլորը միասին տրվել է ամբողջ ժողովրդին նրա խառնվածքի ամբողջական բնութագիրը, նրա ձգտումները և իղձերը: Վիպերգերում մեծ է անհատ հերոսի դերը, նա քաջ է, միշտ հաղթող, նույնիսկ անհավասար կռվում, թշնամու դեմ հաճախ կոչվում են մեն-մենակ հարազատ ժողովրդի խրախուսանք, նրա բարոյական ուժը:

ԴՅՈՒՑԱԶՆԵՐԳԵՐ

Դյուցազներգերի բովանդակությունը՝ պատմական դեպքերի հետ կապված, հերոսների կյանքի ու սխրանքների նկարագրությունն է, նրանց գովքն ու փառաբանումը: Ի դեպ, գովերգելով հերոսի սոցիալական ծագումը՝ այստեղ ոչ մի դեր չի խաղում ժողովուրդը, ամենայն ակնածանքով մեծարվում է ազնվականական – ոչ ազնվականական ծագում ունեցող քաջ ռազմիկներին ու ասպետներին, որոնք ազգը օտարերկրյա լծից ազատագրելու պայքարում հերոսացել ու մահացել են(Վարդան Մամիկոնյանը, Տեր Ղուկասովը): Դյուցազներգեր հորինվել են ոչ միայն անմիջական պատմական իրադարձությունների մեջ: Նրանք ստեղծվել են ժողովրդական երգիչների կողմից, իբր– այդ իրադարձությունների արձագանք, թեր– որ–է իշխանի կամ պալատականի պատվերով՝ արքունական խնջույքների, իրենց հերոս նախնիներին փառաբանելու համար: Հայկական ժողովրդական բանահուսության մեջ դյուցազներգերի վառ օրինակը է «Մոկաց Միրզան»: Ինչպես «Սասունցի Դավիթ» էպոսում, այնպես էլ «Մոկաց Միրզայում» 2 անհատի՝ Մոկաց Միրզայի – Կոլուտ փաշայի բախումով, ժողովուրդը ներկայացնում է 2 հոգեկան – ֆիզիկական գեղեցկություն, մարդկային բարձր արժանիքներ, իսկ մյուսի մոտ՝ նենգություն ու ստորություն: Ժողովրդի համակրանքը միշտ բարու ու գեղեցիկի կողմն է որին նա մաղթում կամ վերագրում է հաղթանակ: Այդպես են ներկայացվում ժողովրդի լավագույն ձգտումները, իր հավատը արդար գործի նկատմամբ: Սակայն Ողբում գովերգում է սոցիալիզմից հեռու, աշխարհից հեռացող ամեն ոք, ապա վիպերգում փառաբանվում է ժողովրդական հերոսի անուժ վաստակած ռազմիկը:

ՊՏՂԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԱԿՆԿԱԼՈՂ ԾԻՍԱԿԱՐԳ

Աշխարհի բոլոր ժողովուրդներն էլ, հատկապես երկրագործները, անկախ կրոնական պատկանելությունից, կարևորելով գարնան դաշտային աշխատանքները, որոնցից կախված էր թե՛անհատի, թե՛ամբողջ համայնքի գոյությունն ու բարեկեցությունը, առանձնակի նշանակություն էին տալիս առաջին անգամ հողը փխրեցնելուև սերմը հողին հանձնելու ժամանակ կատարվող բազմապիսի ծեսերին ու արարողություններին: Բնությանև արգասավորության աստվածներին ու ոգիներին ձոնված թատերայնացված արարողություններն ուղեկցվում էին աղոթքներով, զոհաբերություններով, օրհներգերով ու նվագներով: Հայոց կենցաղում, ըստ գրականության տվյալների ու ականատեսների վկայության, մինչև 1920-ական թվականները, գարնանային աշխատանքներից առաջ եկեղեցու սպասավորները մեծ շուքով ու տոնակատարությամբ օրհնում էին հողն ու հատիկը թե՛եկեղեցում, թե՛անդաստանում, ապա միայն սկսվում էր երկրագործական աշխատանքը: Բացի քրիստոնեական այս ծիսակատարությունից, գրականության մեջ պահպանված սուղ տվյալները վավերագրում են նաև առաջին անգամ հողն ակոսելու արարողության մի այլ՝ բուն ժողովրդական տարբերակ, որի տոնական մթնոլորտը, որոշակի փոփոխություններով, առ այսօր կենցաղավարում է շատ մարզերում: Ըստ գրանցված նյութի՝ ժողովուրդը լուսաբացին հավաքվում է գյուղի դաշտերի, արտերի ու այգիների մոտև աշխատանքն սկսելուց առաջ զուռնաչին հնչեցնում է կանչի նվագը՝ , Սահարինե, ապա սկսվում է տոնախմբությունը. երգում, պարում են, օրհնում ու բարեմաղթում միմյանց, ապա ծաղիկներով զարդարված լծկաններին ու հողագործներին մեծ հանդիսությամբ ուղեկցում դաշտը վարելու:

Հայաստանի շատ շրջաններում բերքահավաքի տոնակատարության սկիզբն ու ավարտը ազդարարող ,Սահարուե նվագը միշտ ընկալվել է միայն կանչային գործառույթով: Ներկայացված տրամաբանական շղթայի դիտարկմամբ ակնհայտ է, որ բերքահավաքին հնչող ,Սահարինե ոչ միայն ազդարարում է տոնի սկիզբը, այլև պտղաբերության գործընթացի հաջող արդյունքը: Հայամ՝ հայոց ավանդական երկրագործական և հարսանեկան ծեսերում ,Սահարուե գործառնության հիմնական ոլորտների դիտարկումը հանգեցնում է մի ուշագրավ եզրակացության մեղեդին հնչում է այն բոլոր ծիսական արարողություններում, երբ ակնկալվում է սկիզբ՝ ծնունդ, պտղաբերություն՝ փեսա-թագավորի, փեսի ծառի (տիեզերական ծառ),

ընտանիքի, արևի, շեշտում է նաև սահմանային անցման գաղափարը՝ անցումը մի վիճակից մյուսին։ ,Սահարինե, ինչպես տեսնում ենք, այն մեղեդիներիցէ, որ ավանդաբար տոների ու ծեսերի ժամանակ պարտադիր հնչել է սերտաճելով տվյալ ծիսակարգի հետ, ձեռք բերել խորհրդանիշի արժեք։Եվ եթե նույնիսկ այսօր թե՛ ծեսի, թե՛երաժշտության առումով, մեզ է ներկայանում ոչ նախնական վիճակով, կամ միայն էթնիկ հիշողության մակարդակով, այնուամենայնիվ, այն խորքում պահպանում է նախնական իմաստային ու կառուցվածքային սաղմերը։ Այնազատ-հանկարծաբանական բնույթի նվագ է, որ հնչում է գերազանցապես զուռնայի, ավելի սակավ՝ քամանչայի, եզակի դեպքերում նաև դուդուկի ու սրնգի կատարմամբ: Ժողովրդախոսակցական լեզվում ,Սահարիե անվանումը հաճախ նշանակում է ընդհանրապես նվագարանային մուղամ, կիրառվում հավաքական իմաստով։ Երևույթ, որ փաստում է հայոց միջավայրում այս մեղեդու լայն կենցաղավարման և կայուն ավանդույթների մասին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայ երաժշտությունը, ինչպես Կոմիտասն է ասում «Այնքան հարազատ է ու ազգային և այնքան ինքնուրույն է ինքնատիպ, որքան իր լեզուն ու գրականությունը: Ժողովուրդն է ամենամեծ ստեղծագործողը, գնացեք և սովորեք նրանցից»:

Բազմազան ու հարուստ է հայկական ժողովրդական երգը: Դարերի ընթացքում ժողովուրդն այն փոխանցել է սերնդեսերունդ, հղկել ու զարգացրել: Այսօր էլ լսելով դարերի խորքից եկող հայ ժողովրդի երաժշտությունը՝ մենք հաղորդակից ենք դառնում մեր նախնիների հուզաշխարհին ու մտքերին:

Ուսումնասիրության նպատակն էր, քննության առնել ժողովրդական երաժշտական մշակույթը՝ իբրև հայոց ավանդական կյանքի բաղկացուցիչ: Խնդրո առարկա երաժշտական և ազգաբանական նյութի վերլուծությունը հնարավորություն է ընձեռում եզրահանգելու, որ ավանդական հայ հասարակության կյանքում երաժշտությունն առավելաբար ստանձնում է հանրույթին անհատի առտնին և սրբազնային կենցաղն ու ծիսական կյանքը կառուցակազմող, կազմակերպող գործառույթ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա. Բարսամյան, Մ. Հարությունյան15,Հայերաժշտությանպատմությունե
2. ՀռիփսիմեՊիկիչյանԵրաժշտությունը Հայոցավանդականառտնինտոնաձիսակ անկյանքում

Օրվա դասի պլան

IV դասարան

Դասի թեման՝ - Իմ ժողովրդի երաժշտությունը

Ուսուցանել՝ - «Հո՜յ, Նազան» և «Օրոր» երգերը

Ունկնդրում – Ունկնդրել տարբեր բնույթի ժողովրդական երգեր:

(«Երկինքն ամպել է», «Քաղհան», «Օրոր», «Հո՜յ, Նազան») և այլն:

Դասի նպատակը - Ծանոթացնել ազգային երաժշտության ճյուղերին՝ ժողովրդական երգերի տեսակներին, տարբեր բնույթի երգերի հակադրմամբ ցույց տալ ժողովրդական երգերի կատարման եղանակները, նրանց տեղը և դերը մեր ժողովրդի կյանքում:

Դաստիարակել սեր ազգային երաժշտության նկատմամբ:

Զարգացնող –Զարգացնել երգերի բնույթին համապատասխան և ճիշտ ինչերանգով կատարման կարողությունը:

Վերջնարդյունք –Կարողանա ներկայացնի հայ ազգային երաժշտական ստեղծագործության կառուցվածքին բնորոշ առանձնահատկությունները:

Մեթոդական հնարքներ -«Մտագրոհ», «Տ-աձև աղյուսակ»

Միջառարկայական կապ –Գրականություն, պարարվեստ, կերպարվեստ

Դասի ընթացքը –Մտագրոհի միջոցով պարզել աշակերտների գիտելիքները ժողովրդական երգերի մասին:



Երեխաները թվարկում են այն երգերը որոնք ծանոթ են իրենց:

Ամփոփում ենք պատասխանները, ունկնդրում տարբեր բնույթի երգեր և անցնում նոր դասանյութին:

Իմաստի ընկալման փուլ –Ծանոթանալ երգերի առանձնահատկություններին:

Ունկնդրել«Հո՜յ, Նազան» և «Օրոր» երգերը:

Դասարանը բաժանել խմբերի, տալ առաջադրանքը՝ վերլուծել երգերից որևէ մեկը: Երեխաները կարող են իրենց տպավորությունները ներկայացնել նկարներով, ամփոփել խմբային աշխատանքի արդյունքները: Սովորել «Հո՜յ, Նազան» երգը բանավոր կրկնության մեթոդով:

Երգը կարելի է կատարել մի քանի ձևով՝ մենակատարներով, շարքերով, աղջիկ տղա հաջորդականությամբ:

Կշռադատման փուլ –Ամփոփել դասը՝ համեմատելով դասի ընթացքում հնչած բոլոր ստեղծագործությունները «Տ-աձև աղյուսակի» մեթոդով՝ կարևորելով բոլորի ընդհանրությունը: Կատարել աշխատանքային տետրի համապատասխան առաջադրանքները: